ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ
(1889—1920 թթ.)

Նախիջևանը, լինելով հայկական տարածք, մտել է Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների, ապա Բագրատունիների թագավորությունների կազմի մեջ։ Այն ընդգրկել է Այրարատ նահանգի՝ Շարուր, Սյունիքի՝ Երնջակ, Ճահուկ, մասամբ Կովսական և Վասպուրականի՝ Նախճվան ու Գողթն գավառները։ Նախիջևանը հաճախ է ենթարկվել օտար գավթիչների ասպատակություններին։ Բագրատունյաց թագավորության անկումից հետո միմյանց հաջորդելով Նախիջևանին տիրել են մի շարք օտար նվաճողներ, բայց նրա բնակչության մեծ մասը կազմել են հայերը։ XVI դ. սկսած, մինչև 1828 թ. Ռուսաստանի կողմից նվաճվելը, այն կովախնձոր էր Պարսկաստանի ու Թուրքիայի միջև։ Թյուրքերն այստեղ հայտնվել են XI դ. վերջերին՝ սելջուկյան արշավանքների ընթացքում և հետո։

Եկվոր և Նախիջևանում հաստատված թյուրք էթնիկական տարրը շարունակ ձգտել է տարբեր միջոցներով հայաթափ անել Նախիջևանը։ Այս երևույթը շարունակվել է նաև ռուսական տիրապետության օրոք, հաճախ իշխանությունների լուռ թողտվության պայմաններում։ Իսկ 1918—1920 թթ., չնայած նախիջևանահայության, հատկապես Գողթնի հայ բնակչության համառ դիմադրությանն ու հերոսական պայքարին, թուրք շարդարարներին հաջողվում է տեղի մուսուլմանների համագործակցությամբ գրեթե հայաթափ անել երկրամասը։

Հրապարակվող փաստաթղթերը պահվում են ՀՀ պատմության պետական կենտրոնական արխիվի ֆոնդերում։

Մ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

№ 1

Ջահուկ գյուղի հասարակության դիմումը Մակար կաթողիկոսին[1] թուրք բնակչության ենշումից իրենց պաշտպանելու մասին

13 հունվարի 1889 թ.
Ջահուկ

Գյուղիս թուրք հասարակության մեզ հասցրած բազմատեսակ չարիքները, որ շատ անգամ բարբարոսության են հասել, մենք ահա մոտ 60 տարի, հայերիս հատուկ համբերությամբ տարել ենք։ Մակայն թուրք հասարակությունը չբավականանալով նրանով, որ, ամենայն գարշելի միջոցներ գործ դնելով շարունակ հափշտակում, տեր էր դառնում մեր քրտնաթոր վաստակին, չհերիքանալով մեզ հասցրած ամբողջ աղետներով ու վնասներով, վերջին տարիներս նա մի առանձին եռանդով պարապմունք ունենալով մի քանի մոլեռանդ կրոնապետեր, սկսեց ձեռք առնել դանդաղ արմատական միջոցներ, որպեսզի հայ հասարակությունս ստիպված իր վերջին փրկությունը որոնե գաղթականության մեջ։

Բայց թուրք ազգաբնակությունը, վերջապես ձանձրանալով հայերիս երկարատև, անմոռնչ համբերությունից, քաջ համոզված լինելով, որ մենք պատրաստ ենք կրել մարդկային մեքենայած ամենայն չարիք, միայն չթողնել հայրենի սուրբ երկիրը օտարի ձեռք, այդ անդութ ազգը իր վերջնական նպատակին հասնելու համար մտածեց դիպչել մեր կրոնական զգացմունքներին։ Վերջին տարիներս մենք կատարյալ հալածման մեջ էինք, այնպես որ մեր կրոնի ամենայն օր հրապարակական անպատվությանը ենթարկվելը, ծիսակատարությանց և ժամասացության բազմավաղ խափանումը սովորական, առօրյա բան դարձավ, թեև մենք այդ բոլոր անկարգությանց մասին իր ժամանակին բողոքեցինք, բայց ապարդյուն, մեր ձայնը լսող չեղավ։

Հայ հասարակությունս, պարզ ի նկատի ունենալով, որ իր կրոնի ազատորեն դավանությանը ապագայում մեծ վտանգ է սպառնում, իսկ թրքաց կողմից հետզհետե աճող շարագործությունները մեծ մասամբ անպատիժ են մնում, իր հայրենիքը չթողնելով հանդերձ, որոշեց մի պատճառաբանորեն խնդիրք ներկայացնել նորին վսեմափայլության Անդրկովկասի բարեխնամ կառավարչին, որպեսզի թույլ տրվի հայ հասարակությանս բաժանվելու թուրք հասարակությունից, որի մեջ ցրված խառն կերպով բնակվում են համեմատաբար թվով շատ սակավաթիվ հայեր։ Բայց մեր ձայնը մինչև այսօր լսող չեղավ, իսկ մեր վիճակը ոչ միայն հետզհետե ավելի վատթարացավ, այլ մեր դրությունը բոլորովին անտանելի դարձավ։

Չունենալով ուրիշ որևէ ելք, հասարակությունս այս ճգնաժամից ազատվելու համար դիմում է Ձեզ, վեհափառ տեր, արտասվոք աղերսելով, որ ձերդ վեհափառությունը իր բարձր հովանավորությամբ նպաստե մեր արդարացի խնդիրքի շուտափույթ լուծման, որպեսզի մենք ստիպված չլինենք այսպիսի լուսավորյալ դարում մեր կրոնը, կյանքը և սեփականությունը ազատելու համար գաղթել օտար երկիր*։

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 141 ա, թ. 1-2։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 2

Նախիջևանցիների լիազոր ներկայացուցչի հեռագիրը Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցուն՝ Նախիջևանում սկսված հայկական ջարդերի դադարեցման համար միջոցներ ձեռք առնելու մասին

13 մայիսի 1905 թ.
Երևան

Երրորդ օրն է, որ Նախիջևանում տեղի է ունենում հայերի կոտորած թուրքերի կողմից։ Կողոպուտն ու հրձիգությունը ստացել են սոսկալի ծավալ։ Սպանվածների, վիրավորվածների և այրված հայերի թիվը ահագին է։ Թուրքերից սպանված է միայն 2 հոգի։ Այդ ամբողջ սարսափը քաղաքից տարածվել է գավառի վրա, որտեղ հայերն ավելի անպաշտպան են։ Սպասվում է մասսայական հարձակում պարսկական քրդերի կողմից։ Երևանում տպրող Նախիջևանցի զավակների կողմից խոնարհաբար խնդրում ենք Ձերդ վեհափառության հովանավորությունը։

Մի խումբ Նախիջևանցիների լիազոր՝ Քյալաշ Մելիք Անդրեասյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 4, գ. 400, թ. 41—42։
Գործավարական թարգմանություն ռուսերեն բնագրից։ Ձեռագիր։

№ 3

Կարապետ վարդապետի հեռագիրը Մկրտիչ Ա Վանեցի կաթողիկոսին՝ Նախիջևանի գավառի հայության կոտորածի մասին

14 մայիս 1905 թ.

Հասա 11-ին։ Որոշեցինք ընտրել երկու ազգի կողմից էլ հնդական ներկայացուցիչներ։ 12-ին, առավոտյան ինն ժամին հավաքվեցինք խորհրդաժողով։ Երբ սկսվեց հրացանաձգություն, մնացինք փակված եկեղեցու թակում։ Ավերված է շուկան, այնտեղ եղած հայերից քչերը միայն կարողացան աղս տվել, մյուսներին սրախողխող արին։ Առայժմ գտնվում է մոտ 30 դիակ, բացի վեց այրվածներից՝ Կարապետ Ադամյանից, նորա փեսայից,

* Հետևում է 81 ստորագրություն։

գործակատարից և երեք խալաթյաններից։ Փոքր էր մնացել, որ Մելիք Աղամալյանին սպանեին։ Շուկայի մի մասը վառեցին, հայոց բոլոր խանութները մինչև վերջին փշրանք ամենայն անողորմությամբ թալանեցին։ Տեղական զորքը հասավ երկու ժամից հետո, բաժանված պահակախմբերի, և կարողացավ հանգցնել միայն հրդեհը և կանգնեցնել բնակարանների վրա հարձակումը և վերականգնել փոքր-ինչ խաղաղություն, որն առայժմս շարունակվում է։ Լուրերին նայելով գոհերի թիվը հարյուրից ավելի է։ Երեկ տեղեկություն ստացա ջահրինցիների և ուրիշ հայ գյուղերի անհույս կացության մասին։ Այնտեղ ուղարկեցինք Ջաֆար Կուլի խանին, ջահրինցիների մի մասը պաշտպանվելով՝ փրկվեց սեփական տներում։ Շատ կանանց և երեխաների ապաստան սվին թուրքերից մի քանիսը։ Զոհերի թիվը որոշ չէ։ Աղատելով բոլոր կենդանի մնացածներին, հասցրել են Շխմահմուդ, որտեղ և հավաքվեցին Նազարապատի, Դիտի-Ուզուն Օբայի, Դիտվարի, Խալիլուի, Քյուլթափայի բնակիչները, որոնց գիշերը օգնություն ուղարկեցինք։ Ասում են, Հաջիվարի քահանային և այլոց մորթել են, գյուղն այրել։ Գնում եմ այնտեղ խանի հետ։ Զորքն այսօր կհասնի, խոստացան ղազախների* մի հարյուրյակ, բայց վերջնականապես խաղաղեցնելու և գավառի հայերին փրկելու համար, նրանց վերադարձնելու կողոպտված գույքը, հատուցանելու վնասները և պարզելու ավերածության պատճառը, հարկավոր են ընդարձակ միջոցներ։ Հեռագրեցինք սուլթան Կրիմ Գիրեյին, որ գարձնե այդ բանի վերա փոխարքայի ուշադրությունը։

Խնդրում եմ Ձերդ սրբության միջնորդությունը և ազդեցությունը, որպեսզի շուտափույթ նյութական օգնություն տրվի արկածյալներին։

Կարապետ վարդապետ

22 ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 4, գ. 400, թ. 1։ Գործավարական թարգմանություն ռուսերեն բնագրից։ Ձեռագիր։

№ 4

Միքայել Մելիքյանի նամակը Ամենայն հայոց կաթողիկոսին՝ Նախիջևանի գավառի հայ բնակչության կոտորածի մասին

28 մայիսի 1905 թ.
Նախիջևան

Շատ ու քիչ լրագիրներից իմացած կլինիք Նախիջևանի գավառի աղետն, որն կատարվեց, այսինքն, սկսվեց ամսի 12-ին։ Այո, ցավելով պիտի նկարագրեմ, Բաքվի աղետից հետո բոպե առ բոպե սպասվում էր այստեղ աղետի լինելն։ Այդ չհաջողվեց առաջ, որովհետև փետրվար ամսի վերջերին սկսվեց թուրքերի շախսեյ-վախսեյը[2], որը սովորաբար տևում է տասն օր և ի՞նչ է կատարվում այս տասն օրում, դուք գիտեք։ Եվ քառասուն օրեր նորա սուգն է, այնպես որ 50 ավուր ընթացքում ամեն մի հավատացյալ մուսուլման պարտավոր է հաճախել մեջիդ և ժամերով այնտեղ մնալ աղոթելու կամ լսելու, այդ շիաների համար է։ Անդավ 50 օրն, թուրքերը սաստիկ կերպով պաբասուլում էին, հայերն իրենց խանութները փակեցին։ Այդ հանգամանքը հայտնվեց Երևանի նահանգապետին և Կարապետ վարդապետին։ Երևանից եկան այդ վերջինը, Երևանի քաղաքագլուխ Հովհաննես Մելիք-Աղամալյանը, փոխնահանգապետը, որն իջևանել էր Քալբալի խանի որդի Ռահիմ խանի մոտ որպես հյուր, հայերին ամսի 10-ին հրավիրեց իր մոտ և համոզեց, որ հայերը խանութները բացեն։ Մյուս օրը խանութ բացողներ չեղան, փոխնահանգապետը դալիս է բազար, ուղարկում է աչքի ընկնող վաճառականներին՝ կանչելու Կարապետ

* Նկատի ունի կազակներին։

Ադամյանցին, մահտեսի Սահակ Եղիազարյանցին, խոյեցի Բաղալի և Հովհաննեսի որդիներին և շատ ուրիշներին։ Ժամը երկուսին կեսօրից հետո հայերը խանութները բացում են, ոչինչ չի պատահում։ Մյուս օրն, 12 մայիսի, նահանգապետը, Քալբալի խանի երկու որդիք, քաղաքիս ավագ Ջաֆար Կուլի խանը, Ռահիմ խանը, Սելիք-Աղամալյանց բոլոր ոստիկանությունով շրջում են բազարն, հայերի խանութներն դեռ փակ, նահանգապետը ուղարկում է, դալիս են մի քանի վաճառականներ, Ադամյանց, Խալաթյանց և ուրիշներ։ Նահանգապետը, խաները հանդոզում են հայերին, որ խանութները բացեն և նրանք երաշխավորվում են, որ ոչինչ չի կարող պատահել։ Հայերից մի քանիսն, այսինքն սեծ մասը, որոնց թվում էր Ադամյանց, բացում են խանութները և ուղարկում են մահտեսի Սահակը, խոյեցիներն և ուրիշներն էլ դան խանութներն բացեն, քանի որ նահանգապետը իր սվիտայով բազարում շրջելիս է լինում։ Հանկարծ չորս կողմից հրացանաձգություն է սկսվում, վեց կամ յոթ տեղից թուրք ամբոխը բերդանկաներով, ռևոլվերներով, խանչալներով, բեհբութներով մտնում են բազար, ամեն պատահած հայերին կոտորում են, կոտորում են բոլոր խանութ բացող հայերին, այնու սկսում են խանութների դռները, պատուհանները ջարդել, միջի եղած ապրանքը դուրս հանել սայլերով, ուղտերով, ձիաներով, էշերով դեպի թուրքերի թաղն և այգիները, մինչև ժամի 7 ու կեսը երեկոյան, այնպես որ կերակուր եփող հայերի շամփուրներն էլ տանում են, բայց մի թուրքի խանութի չեն կպել։ Ադամյանցին, նորա փեսա Հովսեփ բեկ Սելիք-Թանգյանցին, երկու խալաթյանցներին և մի քանի ուրիշներին այրում են նավթով։ Կոտորածի թիվը հասնում է 70-ի միմիայն քաղաքում, քաղաքի վնասն հասնում է մի քանի միլիոնի։ Թալանված են Ջահուկ գյուղն, 55-ի չափ սպանված, Թմբոլ գյուղ՝ 30-ից ավելի կոտորածներ, Հաջիվար, Յարմջա, Քյուլթափա, Դիտիվար, Տամրզնգան, Ուզուն Օբա, Խալխալ, Կազանչի, Նորաշեն, Ղարախանբեկլու և ուրիշ շատ գյուղեր թալանեցին։ Յարմջա գյուղում էր Մեսրոբ եպիսկոպոսն, տարել են Հաղարափրկչի սուրբ խաչն։ Գյուղերում բոլոր եկեղեցիները քանդել են, զարդերը տարել մասունքների հետ։ Մոտավորապես 50—60 գյուղ թալանեցին։ Այժմ էլ շարունակվում է միմիայն լեռնագյուղերում։ Արանի* գյուղերում պատահում են մասնավոր տպանություններ։ Բաղամլու գյուղն թալանված է, ապրանքը վերադարձրել են հենց նրա համար, [որ] գյուղացիք խոստացել են մահմեդականություն ընդունել, այն գյուղի քահանա Թադևոսի գլխին փաթաթել են չալմա և ուղարկել Թերքեշ թուրքերի գյուղն, 50 մարդու չափ խալխալից գերի են տարել, որպես[զի] թուրքացնեն։ Փոխնահանգապետը դեռ այստեղ է, եկել է գեներալ Ալիխանով Ավարսկին, որն պակված է Քալբալի խանի աղջկա վերա։ Նա էլ իջել է իր աներոջ տանը։ Թուրքերը հավատացրել են փոխնահանգապետին, Ալիխանովին և ուրիշ ծառայողների, որ այդ աղետի պատճառն հայ հեղափոխականներն են։ Եվ այսպես հայերի ամեն մի գանգատը դրական բավարարություն չէ ստանում։ Աղետի ժամանակ թե քաղաքում, թե գյուղերում Ալիի[8] ձեռքը, այսինքն, դրոշակը բարձրացրած «յա՛ Ալի» էին կանչում, շատերն կարմիր օսմանցոց ֆասկը գլխին, թևերը ծալած, կարմիր թաշկինակով կապած, կանչում էին «Ալի», «Հաղրաթի Աբաս», կոտորում էին և թալանում։ Այն վաճառականները, որ քանի մի հարյուր հազար ռուբլի կարողություն ունեին, այսօր դառն աղքատության մեջ են, չքավորն որ՝ իրան կարգին։ Թե քաղաքացիք և թե գյուղացիք այն դրության մեջ են, ինչպես 1828 թվին Պարսկաստանից գաղթելու ժամանակ, լաց, կոծ, վայնասունն երկինք է հասնում։ Քաղաքում մոտավորապես 10 հազար աղքատ գյուղացիներ կան։ Շխմահմուդում, Գոմուրում, Աբրակունիսում նույնպես հավաքված են շատ հայ գյուղացիներ։ Աբրակունիսի վանքը[4] և գյուղն, և նույնպես Կարմիր վանքը[5], թաղագյուղն չեն ենթարկվել թալանության։ Գյուղացիների վարուցան-

* Պարսկերեն բառ է, նշանակում է դաշտավայր։

քը, այգիները բոլորովին ոչնչացրել են, թանկությունն անպատմելի է, մասնավոր փողեր ստացվում են։ Այդ փողերով ալյուր է ուղարկվում հիշյալ գյուղերը բաժանելու։ Դատեցեք, աղքատներին կերակրում էին հարուստները, առաջինների գրության հասան վերջինները։ Շատ պատճառներ կան, միմիայն կասեմ մի քանիսը։ Համիսլամություն, քանի տարի է, որ տաճկաց ագիտատորները քարոզում էին դրա վրա դնել ռուսաց անհաջողությունը Հեռու Ասիայում, մեկ էլ թուրքերը չէին կարողանում տանել, որ հայերը 1828 թվին Արաքսից տկլոր անցան[8], այժմ ամբողջ վաճառականությունը նրանց ձեռքն անցկացավ, թուրք բեկերն աղքատացան և նրանց անշարժ կայքերն անցան տեր-մկրտիչների, ադամյանների, պողոսյանների, մուղդուսի սահակյանների ձեռքը։ Փետրվարի 20-ին հայերի և թուրքերի խառն ժողով եղավ, որ չթողնվի աղետ պատահի։ Նիստը բացվելուն պես առաջարկեցին հայերին հազար ռուբլի տալ մեչիդ շինելու համար։ Մեկ բաղնիք հայերը քրահով վեր առնեն Ռահիմ խանից, որտեղ միմիայն հայերը լողանան և շատ ուրիշ բաներ, ամենն էլ հայերն ընդունեցին հենց նրա համար, որ հաշտություն լինի։ Շախսեյ-վախսեյի օրերին հայերս մեջիդ էինք գնում և փող տալիս մոլլաներին։ Վերջի ժամանակ սրիկա կամ սովորեցրած թուրքերը բացարձակ մտնում էին հայերի խանութները, փող պահանջում, ամեն տեղ պատահելիս լոթի խարջի էին ուզում։ Եթե նայեք Նախիջևանի քաղաքի և գյուղերի վրա, կատարյալ Սոդոմ Գոմորն է ներկայացնում։ Մեռելություն, աղքատություն, չքավորություն, սուգ, լաց, կոծ, վայնասուն ամեն տեղ թագավորում են։ Տեր Աստված, գա ի՞նչ պատիժ էր, պատուհաս էր, որ ամբողջ քաղաքի և գավառի վերա ընկավ։ Ամսիս 12-ին Դարալագյազու Ղուշչի Բիլավ, Գնդևազ գյուղերն էլ են թալանել։ Այդ գյուղերն ունեն հեռավորություն՝ Նախիջևան քաղաքից 80—90 վերստ*։ Պարզ է, որ նախօրոք ամեն բան պատրաստել էին և որոշել էին օրն։

Բարձր գերապատիվ սրբազան, ազնվություն, այն էլ շատ, հարկավոր է։ Փողերը կարելի է փոխանորդի վերա ուղարկել։ Ոչ մի թուրք չի վնասվել, ընդհակառակը նրանց աղքատն էլ հարստացավ։ Քանի մի տասնյակ հեռագրեր ուղարկեցի «Новое обозрение»։ Մի քանիսի պատճեն «Մշակին» և Վերմիշևին[7]։ «Обозрение»-ում մի քանիսը տպվել էին։ Ահա չորրորդ փոշտն է, որ Երևանից չէ ստացվում, այնտեղ ի՞նչ է կատարվում, մանրամասն տեղեկություններ չկան, բայց ասում են, աղետը սկսվել է թե քաղաքում և թե գյուղերում։ Անուշը համարյա հիվանդ է, Արշավիրը հունիսի 2-ին Նաշատից**, որտեղ սովորում էր, դուրս է գալու Կավկազ, իսկ աշունքը կվերադառնա, ավարտելու թե համալսարանում և թե պոլիտեխնիկում։ Այստեղ է և Մեսրոպ վարդապետը, այսօր փաստաբաններ են գալու։

Ձեր սրբազան աղոթքին կարոտ՝ **Միքայել Մելիքյան**

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 158, թթ. 53—54։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 5

Մեսրոպ վարդապետի նամակը՝ Ամենայն հայոց կաթողիկոսին՝ Նախիջևանում հայկական ջարդերի և իշխանությունների անտարբերության մասին

2 հուլիսի 1905 թ.
Նախիջևան

Վեհափառ տեր,

Նախիջևանի և գավառի կոտորածն ու ավերը սարսափելի չափեր են ընդունել, որովհետև տեղական վարչությունը ոչ սկզբում, ոչ էլ այժմ կըտ-

* Երկարության չափ, հավասար է 1,068 կմ-ի:

** Հավանաբար, նկատի ունի շվեյցարական Նևշատել քաղաքը։

յուկ միջոցներ չի ձեռնարկում։ Այստեղ մի հեռագիր գրեցինք փոխարքային և Մինիստրների խորհրդին ուղարկելու, որի տակ պիտի ստորագրեին տեղական ռուս ծառայողները, խոստացան, չկատարեցին։ Ուստի ուղարկում եմ Ձերդ վեհափառության՝ խնդրելով, որ Դուք ինքներդ անպատճառ ուղարկեք Ձեր կողմից։ Հեռագիրը կազմված է փաստացի և կարող է հայտնի հետևանք ունենալ։

Նամակաբերը շտապում է, մանրամասնություններ գրել չեմ կարողանում, այն միայն պիտի հայտնեմ, որ դրությունը միանգամայն անտանելի է։ Ժողովուրդը ահաբեկված է և հանգստացնելու միջոցներ չեն ձեռնարկվում։

Վեհափառության խոնարհ որդի՝ Մեսրոպ

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 4, գ. 400, թ. 66։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 6

Նախիջևանի թեմական առաջնորդի փոխանորդի դիմումը Գևորգ Ե կաթողիկոսին[8] Նախիջևանի հայ բնակչության անպաշտպան վիճակի և նրա ինքնապաշտպանության գործը նոգալու մասին

31 հուլիսի 1914 թ.
Նախիջևան

Ձերդ վեհափառություն,

Տեղվույս ժողովրդականությունը յուր ներկայացուցիչների միջոցավ դիմելով նվաստությանս՝ խնդրում է արկանելու հոտս վեհափառ տերության յուր թախանձագին պաղատանքը։

Այն է. եթե արժան կհամարի սրբությունդ, բարեհաճի հուշ ածել նորին կայսերական մեծության տեր լիտխարքային Կովկասու Նախիջևանի և նրա թրքաբնակ վիճակի արկածալիր հայ ժողովրդի անպաշտպան դրությունը և շրջապատի տեղային պարսիկների զգալի խլրտումներից կրած ահաբեկ երկյուղը՝ խնդրելով որոշ չափով զենք մատակարարելու տեղային անպաշտպան հայության ի գործ ինքնապաշտպանության սուրբ գործի։ Նամանավանդ «պերվի ռագրեադն» հավաքելուց հետո երկիրն ինքնըստինքյան միանգամայն ամայանում է յուրային պահպանություններից, և այս հատկապես Նախիջևանի վերաբերյալ և նրա շրջապատի, որի ժողովուրդը երկրի աղքատության երեսից հարկադրված է գաղթել ու գաղթել, հետևաբար մնում են գյուղերում միմիայն անպետքության մատնված ծերունիներ և պառավներ, նամանավանդ Գողթնաց աշխարհում։ Եվ որ նշանակալիցն է, մնացածներից շատերը ևս, ի սեր ռուսական զենքի ցանկալի հաղթանակի, սիրահոժար հանձն են առնում կամավոր զինվորության սրբազան ծառայությունը։

Ըստ որում, որդիական վստահություն հանձինս կալա միջնորդ հանդիսանալու առաջի պաշտելի սրբությանդ՝ ի նախազգուշություն սարսափահար եղած հոտինս։

Ամենախոնարհ ծառա և որդի, փոխանորդ հոտին հնոյն Նախիջևանի՝
<Սիոն վարդապետ>*

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 73, թ. 2։ Բնագիր։ Ձեռագիր։

* Ստորագրությունն անընթեռնելի է։

№ 7

Պոդպորուչիկ Հարությունյանի զեկույցը Նախիջևանի լիազորին, բատալյոնի հրամանատարին և Ազգային խորհրդին՝ թուրքերի կողմից ազնաբերդցիներին զինաթափելու մասին

3—16 հուլիսի 1918 թ.
Ազնաբերդ

Հենց նոր եկավ խանուխլարի լիազոր խաշատուր Սարգսյանը և հաղորդեց, որ Նա ուղարկված է տաճիկ կառավարության կողմից առաջարկելու ազնաբերդցիներին զինաթափ չլինել, հակառակ դեպքում կոմբակոծեն և կկոտորեն ազնաբերդցիներին։ Մենք վճռել ենք զինաթափ չլինել և դիմադրելու ենք նրանց կանոնավոր զորքի դեմ։ Եթե վաղվա համար օգնության չհասնենք, իմացած եղեք, որ Ազնաբերդը հենց էգուց կարող է բնաջինջ լինել։ Տաճիկները արդեն բռնել են Ղարաբաղլարի կողմից բոլոր դիրքերը, դրել են թնդանոթները։ Շատ կարելի է հենց հիմա սկսեն ռմբակոծել գյուղը։ Աղաչում եմ հասնել օգնության, ամեն մի րոպեն կորցնելը մահվան հավասար է։ Ուլիա—Նորաշենը կոտորել են, խանուխլարը զինաթափ են արել։ Եթե Անդրանիկը այնտեղ է, թող հասնի օգնության։ Եթե Ազնաբերդը կոտորեն, թուրքերը շարժվելու են Նախիջևանի վրա։ Մեզ տրված է զինաթափության համար մեկ ժամ ժամանակ։ Իմացած եղեք, եթե Ազնաբերդը կորցրեց իր գոյությունը, այն ժամանակ կտրվում է ամեն գիծ և հարաբերություններ Նախիջևանի և Դարալագյազի հետ։

Պոդպորուչիկ Մ. Հարությունյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 370, ց. 1, գ. 6, թ. 1։ Ձեռագիր։ Բնագիր։

№ 8

Հայաստանի Հանրապետության կառավարության և Նախիջևանի բրիտանական զինվորական կառավարչի միջև կայացած համաձայնագիրը՝ Նախիջևանից հայկական զորամիավորումները հանելու մասին

3 փետրվարի 1919 թ.

Հայկական կառավարությունը պետք է կառավարի գավառը Ուվա չայից մինչև նախկին Երևանյան ուեզդի հարավային սահմանը, որ ենթակա պետք է լինի բրիտանական վերահսկողության տակ, այն պայմանով, որ յուրաքանչյուր գյուղ ինքը ընտրի իր տանուտերը (Headmen), և որ բրիտանական և ոչ թե հայկական զորախմբերը պաշտպանեն կարգն ու օրենքը, որի համար բրիտանական մի զորամաս Դավալուում պետք է դրվի, և հայերը պետք է ետ քաշեն խոշոր իրենց զորախմբերը Ուվա չայից հյուսիս, բացառությամբ Դավալուի զորամասից և պետք չէ որ գնան (հայկ. զորքերը) առայժմ թուրքերի բնակած գյուղերը առանց բրիտանական ներկայացուցչի հրամանի։

Երևանի կառավարությունը պետք է վերահաստատի հեռագրական հաղորդակցությունը սահմանի և Երևան քաղաքի միջև։

Ֆ. Է. Լամբթոն՝
Փոխգնդապետ,
Նախիջևանի գավառի բրիտանական զինվորական կառավարիչ

Հայաստանի կառավարության կողմից՝
Արտաքին գործերի մինիստր
Ս. Տիգրանյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 201, ց. 1, գ. 45 1-ին մաս, թ. 78։ Վավերացված պատճեն։ Ձեռագիր։

№ 9

Գողթան գավառի կոմիսար Ա. Մելիք-Մուսայանի նամակը Հայաստանի Հանրապետության պառլամենտին, Զանգեզուրի ներկայացուցիչներին և եպ. ժողովրդին՝ Նախիջևանի անկման, Գողթնի ծանր վիճակի և շուտափույթ օգնության մասին

3 օգոստոսի 1919 թ.
Վերին Ագուլիս

Նախիջևանը ըստ երևույթին ընկավ։ Շրջանի հայության բավական խոշոր մասը սրի է քաշված։ Արաքսի մեջ նկատված են մեծ թվով դիակներ։ Նախիջևանի մեր զորքերը, ըստ թուրքական աղբյուրների, կոտորածներից ազատված հայության մնացորդների հետ նահանջել են Դարալագյազ։ Նույն աղբյուրներից իմանում ենք, որ Նեհրամում 1000-ից ավելի հայ գերյալներ կան։ Ջուլֆայում և Ջուղայում խոշոր դեպքեր տեղի չեն ունեցել։ Ժողովրդի մեծ մասը ու մեր փոքրաթիվ զորքը անցել են Պարսկաստան։ Աղա և Դեր գյուղերը անվնաս գաղթեցին Ցղնա։ Սրուջակի ձորում ականատեսների պատմելով սոսկալի կոտորածներ են տեղի ունեցել։ Ղազանչիից ազատվել են ու Գողթան ապաստանել մոտ 500 հոգի։ Մի քանի օր տևող կռիվներից հետո Գիազը, Փորադաշտը և Շոռոթը քաշվեցին Գողթան։ Զոհերը շատ քիչ են։

Հուլիսի 25-ից Գողթանում ուժեղ կռիվներ են տեղի ունենում։ Վերի գյուղերում (Փառակա, Բիստ) հաջողությունն առաջիմ մերոնց կողմն է։ Այնտեղ ոչնչացված են թուրքական Բեհրութ և Բիլավ գյուղերը, իսկ Բիստի, Փառակայի, Տիվիի և Ուստուպի թուրքերը փախել են։ Տանակերտը 8 օր է պաշարված է։ Այստեղ տեղի են ունենում դիրքային անընդհատ կռիվներ։ Պաշարված կարելի է համարել և Ագուլիսն ու Դաշտը (Ներքին Ագուլիս)։ Թուրքերը խոշոր պատրաստություններ են տեսնում մաքրելու Գողթանը հայությունից։ Հայության դրությունը հուսահատական է։ Ռազմամթերքի պաշարը մեզանում վերջանալու վրա է, շատ քիչ է և կանոնավոր զենքերի քանակը։ Աննկարագրելի նեղություն մեջ է ժողովուրդը հացի կողմից։ Արտաքին աշխարհից կտրված ենք բառիս ամենալայն իմաստով։ Մի քանի անգամ գենվազ սուրհանդակներ ենք ուղարկել, բայց մինչև օրս չեն վերադարձել։

Գողթանը լքված է հարազատներից և կտրված՝ արտաքին աշխարհից, իր անելիքների մասին ճիշտ հաշիվ տալ իրեն չի կարող։ Ապավինել թուրքերի ողորմածությանը ներկա հանգամանքներում ուղղակի անհնարին է։

Ի սեր Աստծո, ցույց տվեք մեզ փրկության ճանապարհ։ Մեր սեփական միջոցներով 10—15 օր կարող ենք պահպանել ներկա դրությունը։

Սարսափելի չէ մահը, մենք արդեն երկրորդ տարին է, որ հաշտվել ենք այդ մտքի հետ։ Գողթանը կմեռնի հերոսին վայել մահով, սակայն թող ամբողջ աշխարհը իմանա, որ այս անգամ մեզ մահվան դուռը հասցնողը եղավ Երևանի մեր կառավարությունը։ Փրկված է Գողթանը, եթե գոնե 400 սրտացավ հայ զինվոր մեզ օգնության հասնին։

Գողթան գավառի կոմիսար Աշոտ-Մելիք Մուսայան
Ընդհանուր հրամանատար Մ. Գյուլնազարյան

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 201, ց. 1, գ. 170, թ. 20։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 10

Գողթան գավառի միլպետի զեկույցը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝ Գողթնի ծանր վիճակի և օգնություն խնդրելու մասին

3 սեպտեմբերի 1919 թ.
Երևան

Գողթանի 5-րդ համագումարը լիազորեց ինձ գալ Երևան և հայտնել Հայաստանի կառավարությանը, որ Գողթանի հայությունը կտրված է միանգամայն դրսի աշխարհից և չստանալով ոչ մի հրահանգ Հայաստանի կառավարությունից, թողնված է իր բախտին։

Նախիջևանի դեպքերից հետո թուրքերը մեծ ուժերով հարձակվեցին Գողթանի վրա՝ Գողթանը միանգամայն ոչնչացնելու նպատակով։ 10 օր տևող կռվից հետո նրանց հաջողվեց ավերել Տանակերտ հայկական գյուղը, մի քանի անգամ հարձակվեցին Բիստի, Մեսրոպավանի և Ապահիի վրա, բայց գողթանցիների միահամուռ դիմադրության շնորհիվ թուրքերը միշտ էլ ետ մղվեցին։ Ավերելով Տանակերտը՝ Ագուլիսները կտրեցին մյուս գյուղերից՝ Ագուլիսի հայերն էլ ստիպված եղան Ադրբեջանին հայտնել իրենց հպատակությունը։ Ադրբեջանին հայտնեց իր հպատակությունը և Ցղնան։

Գողթան են հավաքվել Շոռոթը, Փառադաշտը, Գիազը, Ազան, Դերը և Ղազանչիի կոտորածից ազատվածները, թվով 500 հոգի։ Միանգամայն սրի է քաշված Երնջակի ամբողջ հայությունը։ Գողթանը մինչև այժմ էլ դիմադրում է թուրքերի գրոհներին, բայց դժբախտաբար դիմադրական ուժը շուտով բոլորովին կթուլանա, որովհետև ռազմամթերքը սպառվելու վրա է և որ ամենակարևորը՝ հացի կատարյալ բացակայություն է։ Հաց Զանգեզուրից և Գենվազից անցկացնել միանգամայն անհնար է՝ ճանապարհ չլինելու պատճառով։ Մնում է միայն հայոց կառավարության միջոցով Նախիջևանի վրայով հաց հասցնել։ Ամբողջ Գողթանում կա ընդամենը 4000 փութ ցորեն և գարի, որը կարող է բավականացնել թե տեղացիներին և թե Գողթանում ապաստանած գաղթականներին մաքսիմում մինչ հոկտեմբեր։ Եթե օրեկան ամեն մի շնչին տրվի 1 ֆունտ հաց, հոկտեմբերին Գողթանում չի լինի և ոչ մի ֆունտ ցորեն կամ գարի։ Այս հանգամանքը ի նկատի ունենալով, Գողթանի համագումարը որոշեց սպասել մի կերպ մինչև հոկտեմբեր, Հայաստանի կառավարության կարգադրությանը, իսկ հոկտեմբերից գաղթել Գենվազ և Զանգեզուր, որովհետև միակ ճանապարհը հոկտեմբերից հետո կծածկվի ձյունով և ոչ կառավարությունը կարող է նրանց օգնության հասնել, և ոչ էլ ժողովուրդը կարող է ձմեռը անցնել Ալանգյոզի վրայով, որը 12300 ոտնաչափ բարձրություն ունի և այժմ էլ պատած է ձյունով։

Համագումարը հրահանգեց ինձ անպայման բերել հայկական կառավարությունից գրավոր հրահանգներ Գողթանի անելիքների մասին։

Գողթան դրամ ուղարկելու դեպքում խնդրում եմ ուղարկել կովկասյան բոներ։

Միլպետ Մովսես Գյուլնազարյան

ՀՀ ՊԴԿԱ, ֆ. 201, ց. 1, գ. 170, թ. 22։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 11

Հայաստանի Հանրապետության մինիստր-նախագահի գրությունը Գողթնի 5-րդ համագումարի նախագահությանը

9 սեպտեմբերի 1919 թ.

Երևանի հայությունը միշտ եղբայրական սրտացավ վերաբերմունք է ունեցել և ունի դեպի Գողթանի անջատված հայ ազգաբնակչությունը։

Եթե մեզնից տեղեկություններն ու լուրերը ուշ են ստացվում, դրա պատճառը հաղորդակցության դժվարությունն ու ճանապարհների հեռավորությունն է։ Ուղարկում ենք Ձեզ վերջին լուրերն ու թերթերը։ Բանակցություններ ենք վարում զբաղավոր կոմիսար գնդապետ Հասկելի հետ՝ Նախիջևանի և Շարուրի գավառներում ամերիկյան նահանգապետություն հաստատելու մասին։ Առայժմ գալիս է ձեզ մոտ նրա ներկայացուցիչը՝ դ-ր Աշերը, իր հետ բերում է փող և դեղորայք։

Ազգային խորհուրդը, եթե առանձին վտանգ չի սպառնում, թող մնա իր տեղը, իսկ եթե որևէ անապահովություն է զգացվում, լավ կլինի, որ ժամանակավորապես փոխադրվի Զանգեզուր։

Մենք ուժի չենք դիմելու և ոչ էլ ուժով ենք գալու ձեզ մոտ, մեր ցանկությունն է համաձայնության ճամփով բանալ երկաթուղին և այլուր ուղարկել։

Չպետք է մոռանանք, որ Հայաստանն ինչքան էլ անընդհատ ենթարկվում է հարձակումների գրեթե իր բոլոր սահմաններում և չնայած այդ ծանր գրությանը, մենք միշտ հիշում ենք Դոլիանն ու նրա բնակչությունը և ամեն կերպ աշխատում աջակցություն ցույց տալ մեզնից անջատված մեր հարազատ եղբայրներին։

Մինիստր-նախագահ

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 95, թ. 1։ Պատճեն։ Մեքենագիր։

№ 12

Երևանարնակ հին ջուղացիների դիմումը Հայաստանի Հանրապետության վարչապետին կոտորածից փրկված նախիջևանցիներին սիրալիր ընդունելության համար պարսկական կառավարությանը շնորհակալություն հայտնելու խնդրանքով

[Հուլիս] 1920 թ.

Անցյալ տարվա Նախիջևանի թաթարական ապստամբության ժամանակ տեղական թուրքերի կողմից հարձակման ենթարկվեց նաև Ջուղա գյուղը, որի հասարակությունը, շնորհիվ ցույց տված որոշ դիմադրության, կարողացել է, մոտ 600 հոգի, անցնել Պարսկաստան։ Վերջինս սիրալիր կերպով ընդունել է որպես երկար տարիների սահմանակից բարեկամ հարևանների և հարմարություն տալով փոխադրել է Թավրիզ, որտեղ ապրում են մինչև այժմս անվտանգ։

Խոնարհաբար խնդրում ենք, պ. նախարարապետ, մեր ամենախորին երախտագիտությունը հայտնել վսեմափայլ Շահնշահի կառավարությանը և Իրանի խաղաղասեր ժողովրդին այնպիսի մարդասեր և ամենաբարձր վերաբերմունքի համար դեպի մեր դժբախտ ժողովուրդը, միաժամանակ աղերսում ենք Ձեզ միջնորդել նույն բարի կառավարության առաջ, որպեսզի մեր ժողովրդի ֆիզիկական գոյությունը վտանգի չենթարկվի վերջերս Պարսկաստան ներս խուժած խռովարարների կողմից, որի մասին հուզումնալից լուրեր են հասնում մեզ։ Աղաչում ենք, միջոցներ ձեռք առնել հարմար դրություն ստեղծելուն պես, որքան կարելի է շուտ, Պարսկաստանից հայրենիք վերադարձնել մեր գյուղի՝ Ջուղայի և նրա շրջանից այնտեղ ճողոպրած հայ ժողովրդին։

Հասարակական ներկայացուցիչներ՝ (ստորագրություն)
Մ. Աղամալյան*

ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 47։ Հաստատված պատճեն։ Մեքենագիր։

* Հասարակության անունից հավանարար ստորագրել է Մ. Աղամալյանը։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Մակար Ա Թեզուտցի (1813—1891)—Ամենայն հայոց կաթողիկոս 1885-ից։ Նրա ջանքերով ցարական կառավարությունը 1885-ին վերանայել է իր 1884 թ. հունվարի 27-ի «Կովկասի հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին» որոշումը և թույլատրել վերաբացել հայկական դպրոցները։

2 Շախսեյ-վախսեյ- սգո օր, չիաների առաջին իմամ Ալիի և նրա որդիների սպանության տարեդարձի օրը (մուհարրեմի օր)։

3 Ալի իբն Աբու Թալիբ (602—661)—արաբ խալիֆա (656-ից), Մուհամմեդի հորեղբոր որդին և փեսան։ Ալիի հետևորդները՝ չիաները, նրան հռչակեցին իրենց առաջին իմամը, իսկ «ծայրահեղ չիաներին» որոշ աղանդներ աստվածացնելով՝ սկսեցին պաշտել ավելի, քան Մուհամմեդին։

4 Նկատի ունի Այունիքի Երնջակ գավառի Ապրակունիս գյուղի մոտ գտնվող ս. Գեորգ վանքը, որտեղ Մաղաքիա Ղրիմեցու ջանքերով 1369-ին հիմնվել է Ապրակունյաց դպրոցը։

5 Կարմիր վանք (Աստապատի ս. Ստեփանոս, Քարատակի վանք)։ Անվանումը ստացել է կարմիր տուֆից կառուցված լինելու պատճառով։ Հիմնադրվել է X դ.։ Ներկայիս համալիրը հնի տեղում կառուցվել է Պողոս Մոկացի վարդապետի կողմից XVII դ. սկզբին։ Վանքը վերանորոգվել է 1697-ին և 1831-ին։

6 1826—28 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո, երբ Թուրքմենչայի պայմանագրով Նախիջևանն անցել է Ռուսաստանին (Երևանի Խանության և Օրզուբազի գավառի հետ կազմել է Հայկական մարզը), հազարավոր հայ ընտանիքներ, որոնք XVII դ. շահ Աբբաս Առաջինի կողմից բռնի քշվել էին Պարսկաստան, կրկին վերադարձել են հայրենի տուն։

7 Խրիստաֆոր Ամրակումի Վերմիշև (1863—1931)—հասարակական գործիչ, հրապարակախոս։ Սովորել է Մոսկվայի Գյուղատնտեսական ակադեմիայում, ծառայել է հողագործության և պետական գույքերի նախարարությունում, Թիֆլիսի քաղաքային վարչության անդամ, 1904—05 թթ.՝ Թիֆլիսի քաղաքագլուխ, խմբագրել է «Բաքու», «Կավկազսկի տելեգրաֆ», «Կավկազսկայա կոպեյկա» գրական-քաղաքական թերթերը։

8 Գեորգ Ե Տփղիսեցի (Սուրենյանց, 1847—1930)—Ամենայն հայոց Կաթողիկոս 1912 թվականից։ Գեորգ Ե-ի նախաձեռնությամբ կազմվել է հայ ազգային պատվիրակություն (Պողոս Նուպարի ղեկավարությամբ) Հայ դատը Եվրոպական կառավարությունների առջև պաշտպանելու նպատակով։